ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. դեկտեմբեր 23 թիվ 199 - Ա

ԹԱԼԻՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 1996 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ''Զինապարտության մասին'' ՀՀ օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածի պահանջները Թալինի զորակոչային տեղամասում 1996թ. ծնված պատանիների կցագրումն անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1.Կցագրման ենթակա պատանիների բժշկական զննումն անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն համաձայն հավելվածի:

1/2012թ. ողջ տարվա ընթացքում Թալինի զինկոմիսարիատում անցկացնել 1996թ. պատանիների կցագրումը և մինչև 2012թ. դեկտեմբերի 23-ը մարզպետին ներկայացնել տեղեկանք կցագրման աշխատանքների արդյունքների մասին.

2.Կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների ցուցակը ներկայացնել ''Թալինի բժշկական կենտրոն'' ՓԲԸ գործադիր տնօրենին նրանց հետագա բուժումը կազմակերպելու համար.

3.''Թալինի բժշկական կենտրոն'' ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Թ.Գևորգյանին՝

1/ Բժշկական զննության անցկացման նպատակով Թալինի զինկոմիսարիատին ապահովել անհրաժեշտ մասնագետներով և բուժանձնակազմով, բժշկական պարագաներով և դեղամիջոցներով.

2/Օժանդակել 1996թ. ծնված պատանիների ամբուլատոր քարտերի ժամանակին տրամադրումը զինկոմիսարիատին.

3/Արդյոքնավետ կազմակերպել կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների բուժումը և արդյուքների մասին ներկայացնել հանձնաժողովի նախագահին:

4.Առաջարկել Թալինի տարածաշրջանի համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1/Թալինի զինկոմիսարիատ ներկայացնել 1996թ. ծնված պատանիներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ապահովել կցագրումից դուրս մնացած 1985-1995թթ. Ծնված պատանիների ներկայությունը.

2/ Ձեռնարկել անհրաժեշտ աջակցություն, որպեսզի զինակոչիկները ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ, անհրաժեշտության դեպքում տրամադրել փոխադրամիջոց:

5.Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Թալինի զինկոմ Տ.Հայրապետյանի վրա:

6.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ.դեկտեմբերի 23 -ի թիվ 199 -Ա կարգադրության

ԿԱԶՄԸ

Թալինի տարածքային զինվորական կցագրման բժշկական հանձնաժողովի

Տ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ –հանձնաժողովի նախագահ
Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆ -հոգեբույժ
Մ.ՀԱՅՐԻՅԱՆ –ատամնաբույժ
Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆ-քիթ-կոկորդ-ականջ
Լ.ՍԵԽԼԵՅԱՆ –ակնաբույժ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ – վիրաբուժ
Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ – նյարդաբան
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ -վիրաբույժ
Հ.ՍԱՆԹՈՍՅԱՆ –բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ